

Թուրք-ազերի ասկարները, որ 2021 թ. մայիսի 12-ին ներխուժել են Սյունիք, շարունակում են մնալ այստեղ, իսկ փոխադարձ մեղադրանքներով ու վիրավորանքներով նախընտրական քարոզարշավի ելած քաղաքական ուժերը, կարծեք, մոռացել են այդ խայտառակությունը:

Երեքշաբթի
15 հունիսի 2021թ.
№ 11 (553)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՄԱՀՅԱՆԱԹԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
2 1 0 1 0 >
9 771829 346006

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

**Հայոց ազգ՝ թո հողին
մատաղ՝ Հայոց
աշխարհի, էն ո՞ր կաթը
դուք ծծեցիք, էն ո՞ր
մեջքը ձեզ բերեց, էն
ո՞ր ձեռը ձեզ գրկեց,
էն ո՞ր բերանը ձեզ
օրհնեց, որ դուք էս
հոգին ունենաք, էս
սիրտը ձեր միջումն
ըլի, էս հրաշքը դուք
աշխարհին ցույց տաք:**

ԽԱՀԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱԼ

Աշխատանքային այցով Սյունիքում Էր ՀՀ-ում Ռուսաստանի դեսպանը

Հայաստանում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը Սյունիքի մարզ կատարած այցելության շրջանակներում հունիսի 3-ին այցելել է Հայաստանում ՌԴ ԱԴԾ Սահմանապահ վարչության Մեղրիի սահմանապահ ջոկատ, ծանոթացել ծառայության պայմաններին, ինչպես նաև հարգանքի տուրք մատուցել Հայաստանում տարբեր տարիներին զոհված հերոս սահմանապահների հիշատակին:

«Ռուսաստանյան դիվանագիտական առաքելության ղեկավարը եղել է Հայաստանի՝ ռուս սահմանապահների կողմից պահպանվող ամենահարավային՝ ՀՀ-ի, Իրանի և Ադրբեջանի սահմանների հատման կետում, այցելել է «Կարճևան» սահմանային անցակետ:

ՀՀ-ում ՌԴ դեսպանն այցելել է նաև «Ագարակի պրինս-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ, որը տարածաշրջանի խոշորագույն հարկատուներից ու գործատուներից է: Կոմբինատի տնօրեն Անդրեյ Սիլյակովը, ներկայացնելով ձեռնարկության ընթացիկ գործունեությունը, հայտնել է իրականացվող բնապահպանական միջոցառումների և այս տարվա հունիսի վերջին կոմբինատի՝ ամբողջապես փակ ցիկլով ջրօգտագործման անցնելու մասին, ինչը պրակտիկորեն բացառելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը: Ձեռնարկության ղեկավարը պատմել է նաև տարածաշրջանի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղվող աջակցության ու սոցիալապես նշանակալի ծրագրերի իրականացման մասին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով Սյունիքում Էր և Արցախի Հանրապետությունում

Հունիսի 3-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Շարագոյն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական քառօրյա այցով Սյունիքի մարզում էր և Արցախի Հանրապետությունում:

Այս ընթացքում Նորին Սրբությանն ուղեկցել են հատուկ հանձնարարություններով հայրապետական Նվիրակ Տ. Պարզև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ եպիս-

կոպոս Խաչատրյանը, Մայր Աթոռի վանական խորհրդի ատենապետ և լուսարարապետ Տ. Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը, Գևորգյան հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Մերոպ վարդապետ Պարսամյանը, Արցախի հոգևոր մշակութային ծառանգության պահպանման հարցերով գրասենյակի տնօրեն Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը, ՀՀ ՀՈՒ Հոգևոր առաջնորդ Տ. Մովսես վարդապետ Սարգսյանը և Մայր Աթոռի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ ավագ քահանա

Մելիքյանը:
Վեհափառ Հայրապետի հետ էր նաև Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ տիար Պերճ Սեդրակյանը:
Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխավորած պատվիրակությանը Գորիսի «Չանգեր» հուշարձանի մոտ դիմավորեցին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Մակար վարդապետ Հակոբյանը թեմի հոգևոր դասի հետ եւ ուրիշներ:

Շարունակությունը՝ էջ 4

Արթուր Դավթյան. «Պետք է ապահովել յուրաքանչյուր քաղաքացու ազատ կամարտահայտությունը. հնարավոր բոլոր հանցավոր արարքներին կհետեւի համարժեք պատասխանատվություն»

Հունիսի 7-ին Սյունիք էր այցելել հանրապետության գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը, ում ղեկավարությամբ տեղի ունեցավ Սյունիքի իրավապահ մարմինների պատասխանատուների խորհրդակցություն, որին մասնակցում էին նաև Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը, Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանը, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ: Խորհրդակցության թեման առաջիկա ԱԾ ընտրությունն էր:

Խորհրդակցությունից հետո Արթուր Դավթյանը պատասխանեց «Սյունյաց երկրի» հարցերին:
– Պարոն Դավթյան, ողջունում ենք Ձեր այցը Սյունիքի մարզ, միշտ չէ, որ հանրապետության գլխավոր դատախազն այցելում է մարզ, իսկ եթե այցելում է, ուրեմն ծանրակշիռ պատճառ կամ նպատակ կա. ի՞նչ առաքելությամբ եք Սյունիքում:
– Այս տարի արդեն երրորդ անգամ եմ այցելում Սյունիքի մարզ: Կարծում եմ այ-

սոր Սյունիքի մարզը բոլորիս ուշադրության կենտրոնում է. հասկանալի է՝ ներկայիս իրավիճակով պայմանավորված՝ բոլորիս մտահոգությունը սահմանային անվտանգության խնդիրներն են: Բայց առաջիկայում ունենալու ենք համապետական լուրջ միջոցառում՝ Ազգային ժողովի արտահերթ ընտրություն, որի նշանակությունը մեր երկրում, մեր երկրի ճակատագրի համար դժվար է գերազանցահատել, եւ այս հարթության մեջ անչափ կարեւոր է այդ

Շարունակությունը՝ էջ 2

Սյունիքի մարզ կատարած այցի շրջանակում Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը հանդիպում է ունեցել Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանի հետ:
Հանդիպման ընթացքում դեսպանը կարեւորեց ռուս խաղաղապահների ներկայությունն այստեղ՝ բնակչության անվտանգության ապահովման առումով: Կողմերը գրուցեցին ներկայումս Սյունիքի սահմանների ստեղծված կացության մասին: Ս.Կոպիրկինի խոսքերով՝ Ռուսաստանն անում է ամեն ինչ, որպեսզի այս ցավոտ խնդիրը լուծվի քաղաքական-դիվանագիտական ճանապարհով, ու ընդգծեց Սյունիքի հատուկ ռազմավարական դերը: Դիվանագետը գնահատեց մարզի տնտեսական մեծ ներուժը եւս, որում այսօր ներկայություն ունի նաեւ ռուսական կապիտալը:
Դեսպանն անդրադարձավ այս տարի երիտասարդական մայրաքաղաք Կապանում անցկացվելիք՝ ԱԳՀ մակարդակով երկու մեծ միջոցառմանը, որոնք, ըստ նրա, շատ լավ առիթ կլինեն ցույց տալու, որ այստեղ մարդիկ շարունակում են ապրել, զարգանալ, կյանքը շարունակվում է:
Սյունիքի մարզպետը նշեց, որ թե՛ մար-

Շարունակությունը՝ էջ 4

ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ. «Պետք է ապահովել յուրաքանչյուր քաղաքացու ազատ կամարտահայտությունը. հնարավոր բոլոր հանցավոր արարքներին կհետեւի համարժեք պատասխանատվություն»

Սկզբը՝ էջ 1

ընտրության բացարձակ օրինական, բացարձակ թափանցիկ ու արդար անցկացնելը: Եվ ընտրական գործընթացի կազմակերպման աշխատանքներում իրավապահ մարմինները բավականին մեծ բեռ ունեն՝ ապահովելու համար յուրաքանչյուր քաղաքացու ազատ կամարտահայտության հնարավորությունը: Մարզային այցելություններ են ունենում. հանդիպումներ են լինում իրավապահ մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև պատկան պետական կառույցների ղեկավարների հետ, ովքեր եւս կազմակերպական պարտականություններ ունեն՝ ընտրական գործընթացի հետ կապված: Քննարկում ենք հավանական ռիսկերը, խնդիրները, համագործակցության առնչվող հարցերը, որ լիարժեք պատրաստ լինենք մեր ռեսուրսներով, մեր իմացությամբ, մեր պատրաստվածությամբ երաշխավորել 33 յուրաքանչյուր քաղաքացու ազատ կամարտահայտությունը:

– **Վերջին ամիսներին, որքանով տեղյակ ենք, որոշակի փոփոխություններ կատարվեցին Ընտրական օրենսգրքում եւ 33 մի շարք օրենքներում, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչություն ունեն ընտրական գործընթացներին: Եթե կարելի է առավել կարեւոր փոփոխությունները փորձեք տեղեկացնել ընտրողներին:**

– Այո, ընտրությունների շեմին բարեփոխումներ իրականացվեցին եւ՝ ընտրական օրենսդրության, եւ ընտրական հանցագործությունների առումով քրեական օրենսդրության մեջ: Ու, ըստ էության, դրանց, եթե ամփոփ կերպով ներկայացնեմ, ամբողջ խնդիրն այն է, որ հանրային վտանգավորություն ունեցող որեւէ արարք դուրս չմնա քրեականացման գործընթացից: Հիմնական ուղղությունները երկուսն են՝ բարոգարչավի անխոչընդոտ իրականացումը երաշխավորելու միտված, որովհետեւ քրեականացվեց քարոզչության ընթացքը ցանկացած եղանակով խոչընդոտելը: Այժմ այդ արարքը, իր հանրային վտանգավորությամբ պայմանավորված, հանցագործություն է: Մյուս խումբ փոփոխությունները միտված են, հանցագործությունների վտանգավորության աստիճանով պայմանավորված, դրանց պատիժն ավելի բարձրացնելու, ընդ որում՝ բացի այն, որ դա ապահովելու է ավելի խիստ պատասխանատվության ենթարկելը, իր տեսակով արդեն այդ հանցագործությունները՝ դառնալով ծանր հանցագործություններ, մեծ հնարավորություններ բացեցին օպերատիվ հետախուզական միջոցառումներ իրականացնող մարմինների համար, որպեսզի կարողանան իրականացնել լայն ծավալով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Մեր գերխնդիրն է լինելու՝ օրենքի ընձեռած բոլոր գործիքներով ապահովել հանցավոր մտադրություն ունեցող որեւէ անձի գործողությունները: Պետք է բացառենք, նախ՝ կանխարգելենք, հավանական ընտրական հանցագործությունների կատարումը, բանզի դրանց բացահայտման ուղղությամբ առավելագույն ջանքեր կապահովվեն:

– **Արդեն որոշ միջոցառումներ, նախատեսված Ընտրական օրենսգրքով, կատարվել են, այսօր էլ մեկնարկել է նախընտրական քարոզչությունը. հետաքրքիր է՝ ինչպե՞ս էք գնահատում հանրապետության (նաեւ Սյունիքի) մասշտաբով ընտրությունների պատրաստման ընթացքը՝ օրինականության տեսանկյունից, կարծում եմ արդեն կունենաք դիմումներ, գանգատներ...**

– Ես կարծում եմ, որ ընդհանուր առմամբ մեր պետությունը պատրաստ է, եւ այս պա-



հին անհրաժեշտ բոլոր գործողություններն իրականացվել են: Մեր տիրույթի հետ կապված՝ քրեական հետապնդման առումով, այս պահի դրությամբ պարբերաբար իրապարակայնորեն ներկայացնում ենք ահազանգերի վերաբերյալ տեղեկությունները. մեր կայքում այդ տեղեկությունները իրապարակված են: Փաստարկված հանցագործությունների վերաբերյալ դեռեւս չունենք արդյունքներ: Կան բազմաթիվ ահազանգեր ամենատարբեր ընտրական հանցագործությունների՝ այդ թվում՝ հավանական ընտրակաշառք բաժանելու վերաբերյալ, որոնց ուղղությամբ իրականացվում են անհրաժեշտ օպերատիվ-հետախուզական կամ ստուգողական

վելու ենք նրա անվտանգության բոլոր երաշխիքները:

Ամենակարեւորը՝ բացառենք յուրաքանչյուր քաղաքացու նկատմամբ հավանական հանցավոր ներգործությունը:

– **Ողջունում ենք Ձեր հետեւողական գործունեությունը՝ ընտրողների ազատ կամարտահայտությունն ապահովելու առումով: Բայց երկու հարց ունենե՞ք՝ ազատ կամարտահայտության առնչվող կամ ստույգ երաշխիք, որ վարչական ռեսուրսը չի օգտագործվի, որովհետեւ այդ ռեսուրսը եղել է, միշտ էլ օգտագործվել է: Այնուհետեւ՝ արդյո՞ք կա երաշխիք, որ քաղաքական հետապնդումների չեն**

Ամենակարեւորը՝ բացառենք յուրաքանչյուր քաղաքացու նկատմամբ հավանական հանցավոր ներգործությունը:

ենթարկվի պաշտոնյաները, պետական ծառայողները, ովքեր կարտահայտեն իրենց անհամաձայնությունն իշխող քաղաքական ուժին:

– Երաշխիքը մեր հետեւողականությունն է, իմ մարզային այցելությունները, բոլոր իրավապահ մարմինների հետ ամենօրյա մեր շփումները: Տարվող աշխատանքները հենց այն երաշխիքն են, որոնք կապահովեն յուրաքանչյուր քաղաքացու ազատ կամարտահայտությունը: Հնարավոր բոլոր հանցավոր արարքներին, որոնք կդրսեւորվեն, կհետեւի համարժեք պատասխանատվություն:

– **Արդեն նախադեպեր կան, Սյունիքի մարզի օրինակով ենք ասում, երբ պատռում են քարոզչական պատասխանները կամ ներկով ծածկում դրանք. այդ արարքներն իրենց մեջ քրեորեն մերժելի հատկանիշներ պարունակո՞ւմ են, եւ արդյո՞ք իրավապահ մարմինները գնահատական են տվել կատարված նմանատիպ երեսույթներին:**

– Ըստ կոնկրետ դրսեւորված արարքի՝ բացառում եմ, որ քրեաիրավական գնահատական չտրվի, որ արձազանք չլինի: Այո, միևնույն քարոզչության սկսելը պատասխանների վնասման բազմաթիվ դեպքեր ենք ունեցել, որոնցով նաեւ քրեական գործեր են հարուցվել, քննություն է անցկացվում, այսինքն՝ եւ քրեադատավարական, եւ քրեաիրավական առումով արձազանք է ստանալու ամեն մի նման դեպք:

– **Հաջորդ հարցս Սյունիքում ակտի-**

վորեն քննարկող թեմաների թվին է պատկանում. վերջին մեկ տարում, հատկապես պատերազմից հետո, քրեական գործեր են հարուցվել, որոնց շրջանակներում մեղադրանքներ են ներկայացվել Սյունիքի մարզի մի բանի համայնքապետի: Հանրության մեջ շրջանառվող կարծիք կա, թե իբր դրանք քաղաքական ենթատեքստ ունեն: Այդ կարծիքները հիմքեր ունեն, թե՞ դրանք այլ մոտիվներով կամ շարժառիթներով հարուցված քրեական գործեր են:

– Ձեզ շատ անկեղծ պատասխանում եմ՝ քաղաքական որեւէ ենթատեքստ որեւէ քրեական վարույթ չի կարող ունենալ: Ձեր բերած օրինակները չանհատականացնելով ասեմ՝ Սյունիքի մարզում քաղաքապետ ունենք, ում նկատմամբ քրեական հետապնդումն իրականացվել է շատ ավելի վաղ, բան պատերազմն էր, բան պատերազմին հետեւած զարգացումներն էին եւ ներկայիս քաղաքական դիրքավորումներն էին: Մենք ունենք քաղաքապետ, ում նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվել, եւ այդ դեպքն ամբողջ երկրի համար տեսանելի է եղել, այսինքն՝ յուրաքանչյուր քաղաքացի հնարավորություն է ունեցել տեսնել, թե ինչ է տեղի ունեցել, հետեւաբար՝ այդ դեպքերի կապակցությամբ հետեւություններ անել, թե քաղաքական ենթատեքստով պայմանավորված են՝ կարծում եմ ակնհայտ շահարկում է:

– **Վերջերս վարչապետ Նիկոլ Փաշինյանն իր ելույթներից մեկում տեղեկացրեց, որ ՊԵԿ-ի տիրույթում, եթե չեն սխալվում, հերթական քրեործն է հարուցվել ԶՊՄԿ հանդեպ, դրանից առաջ էլ հաղորդումներ կային՝ կապված հարուցված այլ քրեործերի մասին. եթե կարելի է՝ ի՞նչ քրեործեր կան հարուցված ԶՊՄԿ-ի մասով եւ ի՞նչ ընթացք ունեն:**

– Ուղղում կատարեմ հարցում՝ ԶՊՄԿ-ի հետ կապված քրեական գործեր չեն կարող լինել, որովհետեւ մեր քրեական օրենսգրքով հանցագործության սուբյեկտը միայն ֆիզիկական անձն է, ԶՊՄԿ-ն տնտեսվարող սուբյեկտ է եւ իր իրավական բոլոր երաշխիքներով անխոչընդոտ իր տնտեսական գործունեությունն է իրականացնում: Ունենք դեպքեր, երբ կոնկրետ աշխատակցի կողմից կոնկրետ հանցավոր դրսեւորումներ են եղել, նման փաստերին տրվել են քրեաիրավական գնահատականներ, դա որեւէ առնչություն չունի, այսինքն՝ որեւէ նշանակություն չունի, թե այդ անձը որ ընկերության աշխատակից է: Այսօրվա խորհրդակցությանը, ուզում եմ նաեւ դա շեշտել, նախաձեռնեցի նախադեպը չունեցող համագործակցություն՝ իրավիք էի ԶՊՄԿ-ի ներկայացուցչին. բոլորիս համար պարզ է, որ մարզի բնակչության մի ստվար գանգված կապված է կոմբինատի հետ, կոմբինատի աշխատակցի ընտանիքի անդամ է կամ աշխատում է այնտեղ: Բնականաբար, այս նախընտրական ընթացքում, նաեւ նախորդ ընտրությունների փորձը հաշվի առնելով, սրանք առիթներ են որոշակի սպառնալիքների ազդեցության տակ մարդկանց քաղաքական կողմնորոշում պարտադրելու՝ աշխատանքից ազատելու, աշխատավարձը ցածրացնելու կամ ընդհանրապես շահագրգռելով՝ աշխատավարձը բարձրացնելով, պաշտոնական դիրքը բարձրացնելով եւ այլն: Եվ ես շատ կարեւորեցի, որ կոմբինատի, ընդ որում՝ օտարազգի ներկայացուցիչը, հենց գլխավոր դատախազից լսի այս ուղերձները, եւ հավաստիացում ստացա. բարի կամ եմ դա համարում, որ նրանք ձեռնարկել են արդեն ու հետայսու եւս կձեռնարկեն բոլոր միջոցները, որպեսզի կոմբինատի որեւէ

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ.

«Իմ հորդորը կապանցիներին հետեւյալն է՝ հունիսի 20-ին ոչ մի պարագայում չընտրել Նիկոլ Փաշինյանին»

Խորհրդարանական արտահերթ ընտրությունները թեակոխում են վճռորոշ փուլ. հունիսի 7-ից մեկնարկել է նախընտրական քարոզարշավը: Սոցիոլոգները տարբեր կանխատեսումներ են անում ընտրական մարայթոնի էլած 25 քաղաքական ուժի, ընտրողների տրամադրությունների վերաբերյալ: Ըստ այդմ՝ մեծ թիվ են կազմում չկողմնորոշված ընտրողները, ովքեր, ամենայն հավանականությամբ, նախընտրական քարոզարշավի օրերին կհստակեցնեն իրենց դիրքորոշումը: Այդ դիտարկումը կարելի է տարածել նաև Կապան մարզկենտրոնի վրա: Բայց Կապանում կա մեկ առանձնահատկություն ես...

Նորություն ասած չենք լինի, եթե փաստենք վերստին, որ Սյունիքի մարզկենտրոնում ընտրողների զգալի մասը սպասում է համայնքապետ Գեւորգ Փարսյանի դիրքորոշմանը: Դա էլ պատահական չէ. պաշտոնավարման մոտ երկու եւ կես տարվա ընթացքում, հատկապես համաճարակի դժվարին ու անորոշ ժամանակներում, Արցախյան երրորդ պատերազմի ողբերգական, բայց եւ հերոսական օրերին, նաև հետպատերազմյան ընթացքում իրեն դրսևորել է մեր հողուջրի արժանապատիվ տիրոջ վարքով: Գեւորգ Փարսյանի դիրքորոշումը պարզելու նպատակով գրույց ունեցանք նրա հետ:

Պարոն Փարսյան, հունիսի 20-ին խորհրդարանական արտահերթ ընտրություն տեղի կունենա հանրապետությունում:
Այդ կապակցությամբ մի բանի հարց ունենք. նախ՝ 25 քաղաքական ուժից ո՞ր մեկին եք սատարելու:

Իհարկե, կարելի է եւ ենթադրություններ անել այդ առումով, բայց դա կլինեք ընդամենը ենթադրություն:

Եկել է Ձեր դիրքորոշումը պաշտոնապես հնչեցնելու ժամանակը:

– Չէի կամենա մեր գրույցը սկսել այդ հարցով, որովհետեւ ինձ համար առաջնահերթն ու ամենակարեւորն այն չէ, թե ում եմ սատարելու կամ ում եմ տեսնում երկրի ղեկավարի դերում: Ինձ համար առաջնահերթ հարցն այն է, որ Նիկոլ Փաշինյանն այլևս չի կարող հետ միասին, որովհետեւ, ինչպես առիթ եմ ունեցել ասելու, քաղաքական այդ թիմը ձախողել է երկրի կառավարումը: Մի խոսքով՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ մեր երկրի ապագան չեմ պատկերացնում:

Նման դիրքորոշման համար կան տարբեր պատճառներ: Ասեմ հիմնականը՝ պատերազմն իր ծանր հետեւանքներով, մարդկային անդամալի կորուստներով եւ օր օրի ահագնացող բացասական ու վտանգավոր, նաև անորոշ զարգացումներով:

Նիկոլ Փաշինյանին գնահատում եմ որպես թույլ մարդ, թույլ ղեկավար, ով անկարող է ղեկավարել Հայաստանի Հանրապետությունը հատկապես ճգնաժամային իրավիճակներում, որում հայտնվել ենք:

– Եվ, այնուամենայնիվ, նորից ենք կարելուրդ Ձեր դիրքորոշումը...

– Ելնելով նրանից, որ մեր երկրում ծանր իրավիճակ է, որ տեսնում ենք թշնամու կողմից մեր երկրից անընդհատ ինչ-որ տարածքներ պոկելու նկրտումները, մեզ պետք է ուժեղ եւ կամային բարձր հատկանիշներով օժտված պետական գործիչ, ով ունի փորձ, նաև



հնարավորություններ, կայեր, գիտելիքներ: Այդպիսի պետական գործիչ է Ռոբերտ Քոչարյանը, ով կարող է արժանապատվորեն ղեկավարել մեր ժողովրդին պատմության դժվարագույն այս հանգրվանում:

– Դուք մասամբ պատասխանեցիք մեր հաջորդ հարցին, բայց ասվածին չի կարող չհաջորդել դրա շարունակությունը՝ իսկ ինչո՞ւ Ռոբերտ Քոչարյանի գլխավորած «Հայաստան» դաշինքին, ասել է թե՛ Ձեր դիրքորոշման հիմնավորումները՝ փոքր-ինչ հանգամանակից:

– Գլխավոր կողմորոշիչն առաջնորդի անհատականության գործոնն է. եթե մի դեպքում ասում եմ՝ Նիկոլ Փաշինյանին որպես

րեւասեր, յուրաքանչյուրն իր համայնքի հոգսերով ապրող ու մտահոգ մարդիկ են, ունեն դրական հատկանիշներ, որոնք, կարծում եմ, կնպաստեն ոչ միայն Սյունիքի, այլև Հայաստանի հետագա զարգացմանը:

Կցանկանայի նշել նաև, որ «Հայաստան» դաշինքի ցուցակում ընդգրկված է մեր համաքաղաքացի Աննա Գրիգորյանը, ով կարճ ժամանակահատվածում բավականին ակտիվ դրսևորեց իրեն Ազգային ժողովում՝ Սյունիքի հետ կապված խնդիրները բարձրաձայնելով ու մտահոգություններ արտահայտելով: Խելացի անձնավորություն է ու սրտացավ. կցանկանայի նրան տեսնել ապագա խորհրդարանում եւս:

” Ինքս էլ հակված եմ այն գործելակերպին, որ ընտրությունն անցկացվի ազատ ու արդար, որպեսզի ձեւավորված իշխանությունը լինի լեգիտիմ:

երկրի ղեկավար չեմ պատկերացնում, Քոչարյանի պարագայում տեսնում եմ ուժեղ եւ փորձառու անհատականություն:

Որեւէ քաղաքական ուժից կախվածություն չունեմ, իմ դիրքորոշումը հիմնվում է նաև հստակ իրողության վրա. բոլոր թեկնածուների մեջ, ովքեր կուսակցությունների կամ դաշինքների միջոցով ներկայացել են ընտրողներին, միակ անձնավորությունը, ով, իմ խորին համոզմամբ, կարող է երկրի արժանապատիվ ղեկավարումը ստանձնել բախտորոշ մեր օրերում եւ դրական տեղաշարժեր ապահովել, Ռոբերտ Քոչարյանն է:

Ինչ վերաբերում է «Հայաստան» դաշինքին, կարող եմ ասել հետեւյալը՝ բավականին հետաքրքիր դաշինք է ստացվել՝ «Վերածնվող Հայաստան» եւ ՀՀԿ կուսակցությունների համագործակցության շնորհիվ:

«Վերածնվող Հայաստան» կուսակցության կազմում ընդգրկված են մարզի համայնքների ղեկավարները, ովքեր իմ ընկերներն են: Նրանց ճանաչելով՝ կարող եմ ասել, որ հայ-

Ուզում եմ ընդգծել ՀՀԿ կուսակցության հանդեպ իմ ունեցած բարոյական պարտքը, միակ կուսակցությունն էր, որ կանգնեց մեր կողքին Կապանի պաշտպանության ժամանակ՝ վերջին պատերազմում: Երբ հոկտեմբերի 18-ին Կապանը պաշտպանելու անհրաժեշտություն առաջացավ, ՀՀԿ-ն միակ կուսակցությունն էր, որի անդամները՝ մեկ վաշտ, Չեչենի գլխավորությամբ (Արայիկ Հովհաննիսյան), ստանձնեցին Սրաշենի ուղղությամբ մեր պետական սահմանի պաշտպանությունը, ընդ որում՝ ամբողջությամբ իրենց ուժերով. զենքը ձեռքին մեր կողքին կանգնած դաշնակցականներից քչերն էին տեղացի: Ես ՀՀԿ կուսակցությանը շնորհակալ եմ, որ այդ օրերին կանգնեցին մեր կողքին ու մեզ նեցուկ եղան:

– «Հայաստան» դաշինքն օրերս հանրայնացրեց իր նախընտրական ծրագիրը, որը, դաշինքի հաղթանակի դեպքում, կարող է եւ դրվել կառավարության ծրագրի հիմքում. համեմայն դեպս դաշինքի մի բանի ներկայացուցիչ նման հայտարարություն արեցին:

Ծրագրային դրույթներից ո՞րն է Ձեզ առավել սրտամոտ:

– Ես լսեցի ծրագիրը, բավականին ծավալուն փաստաթուղթ է, որն ընդգրկում է մեր կյանքի բոլոր ոլորտները: Տեսնում եմ, որ այդ ծրագրերը կարող են ապահովել երկրի առաջընթացը: Բայց ուշադրությունս հատկապես գրավեցին անվտանգության ապահովմանը

միտված անելիքներն ու պատկերացումները: Գնահատելի է նաև հանգամանքը, որ անվտանգության առնչվող հարցերի մասին հիմնավոր խոսք ասաց Ռոբերտ Քոչարյանը:

– Իսկ Սյունիքի հարցում ի՞նչ եք ակնկալում «Հայաստան» դաշինքից, թեեւ անվտանգության խնդիրները կարեւորելով՝ Դուք սյունիքյան համընդհանուր մտահոգությունն արտահայտեցիք:

– Եկեք Ռոբերտ Քոչարյան ասեմք. ակնկալում եմ, որ երկրի ղեկավարումը ստանձնելուց հետո իր ուշադրությունը կսեռնի Սյունիքի վրա, եւ ամենակարեւոր խնդիրների լուծման ուղղությամբ քայլեր կձեռնարկի: Կրկնում եմ ամենակարեւորն այսօր մեր քաղաքացիների, մեր երկրամասի անվտանգության ապահովման է, որը հայտարարված է առաջնահերթություն:

Սյունիքի մարզը երկկողմանի շրջապատված է թշնամիներով. ինձ համար առաջնաինն անվտանգության ապահովումն է, ինչի վերաբերյալ ծրագրում առկա է հիմնավոր տեսլական:

– Դարոն Փարսյան, կարո՞ղ ենք ենթադրել, որ ոչ աշխատանքային օրերին ու ժամերին անձամբ եք մասնակցելու նախընտրական քարոզարշավին, միգուցե նաև համայնքում գլխավորելու եք դաշինքի նախընտրական շտաբը:

– Ոչ, ես քաղաքական թիմի անդամ չեմ, նախընտրական շտաբ գլխավորելու մտադրություն էլ չունեմ, բայց, ինչպես ասացի, դիրքորոշումս հստակ միտված է դեպի Ռոբերտ Քոչարյանը: Եվ գլխավոր նպատակը, ինչպես արդեն նշեցի, Նիկոլ Փաշինյանի իշխանության վերարտադրման բացառումն է, նոր միայն՝ Ռոբերտ Քոչարյանի իշխանության գալուստն սատարելը:

– Մարզի չորս համայնքապետի մասնակցությամբ հիմնադրվեց կուսակցություն, որը միացավ «Հայաստան» դաշինքին, բայց Դուք չմասնակցեցիք կուսակցության ստեղծմանը, հիմա էլ անկուսակցական եք, բայց ճակատագրի կամոք քաղաքական նույն բեւեռում եք հայտնվել:

Չենք թաքցնի՝ այդ առիթով բնարկումների պակաս չի եղել հանրային ամենատարբեր շերտերում՝ ձեր ինքնուրույն եւ անկախ հոգեկերտվածքն ընդգծող:

Ինչպե՞ս ստացվեց, որ այս պահին քաղաքական նույն բեւեռում եք, թեեւ անկուսակցական եք, ավելի ճիշտ շարունակում եք մնալ վերկուսակցական ու ազգային հոռի վրա:

– Եթե դաշինքը չգլխավորեր Ռոբերտ Քոչարյանը, Դուք այսօր ինձ նման հարց տալու առիթ չէիք ունենա:

– Վերջին օրերին որոշ լրատվամիջոցներում կեղծ ստորագրությամբ մի հոդված էր շրջանառվում՝ իբր արդեն իսկ համայնքապետարանը վարչական ռեսուրս է կիրառում: Կարող եք նույնիսկ չարձագանքել այդ հրապարակմանը, մանավանդ որ հանրությունը Ձեզ լավ է ճանաչում, բայց հետագա անհիմն շահարկումներից խուսափելու համար կուզենայինք լսել Ձեր վերաբերմունքն առհասարակ վարչական ռեսուրսի օգտագործման եւ ընդհանրապես ոչ թույլատրելի գործելակերպի կիրառման առումով, բանից իշխանությունը, որ ցանկանում ենք ազգովի ձեւավորել հունիսի 20-ին, պիտի առավելագույնս օժտված լինի լեգիտիմությամբ:

– Ինքս էլ հակված եմ այն գործելակերպին, որ ընտրությունն անցկացվի ազատ ու արդար, որպեսզի ձեւավորված իշխանությունը լինի լեգիտիմ:

Ասեմ նաև, որ վարչական ռեսուրս իմ կողմից չի կիրառվում եւ չի կիրառվի, պարզապես ունեմ սեփական դիրքորոշում, որի մասին խոսում եմ իմ շրջապատի մարդկանց հետ. իմ աշխատակիցներին ես հայտնել եմ դիրքորոշումս, բայց որեւէ մեկին չեմ պարտադրել կամ ստիպել:

– Դարոն Փարսյան, մեզ հետ գրույցի շրջանակներում Ձեր համակիրներին ինչ-որ կոչ կամ հորդոր ուղղելու անհրաժեշտություն տեսնո՞ւմ եք, թե՞ դա պահում եք քարոզարշավի վերջին օրերի համար:

– Իմ հորդորը կապանցիներին հետեւյալն է՝ հունիսի 20-ին ոչ մի պարագայում չընտրել Նիկոլ Փաշինյանին, ոչ մի դեպքում... Նիկոլ Փաշինյանը չարիք է հայ ժողովրդի համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական այցով Սյունիքում էր և Արցախի Հանրապետությունում

Սկիզբը՝ էջ 1

Ավանդական աղուիցի արարողությունից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատականն ու օրհնությունը բերեց քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներին և հավաքված ժողովրդին:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀԲԸՄ նախագահի և հոգևոր դասի հետ մեկտեղ Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաջնորդակիստ եկեղեցի, որտեղ Հայոց Հայրապետին դիմավորեցին Գորիսի բնակիչները և գինվորները: «Հրաշափառ» շարականի երգեցողության ներքո Վեհափառ Հայրապետը, իր օրհնությունը բաշխելով հավատավոր ժողովրդին, մուտք գործեց տաճար, ուր սաղմոսերգությունից և աղոթքից հետո կատարվեց Հանրապետական մաղթանք Հայաստանի և Արցախի անսասանության, Սյունյաց աշխարհի և Նրա ժողովրդի անվտանգ, խաղաղ ու բարօր կյանքի համար:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր պատգամն ուղղեց ներկա ժողովրդին: «Սիրելի սյունեցի հավատավոր զավակներ Մեր, այցելել ենք ձեզ հետպատերազմյան դժվարին իրավիճակի, դառը հարվածների և Նեղությունների դիմագրավման այս ժամանակահատվածում: Եկել ենք ի մոտոս հարձրոք լինելու ձեր մտահոգություններին ու խնդիրներին, նաև Հայրապետական Մեր գնահատականն ու օրհնությունը վերստին բերելու ձեզ:

...Մենք բաջատեղյակ ենք ազգային-հայրենական մեր կյանքի այս վճռորոշ շրջանում ձեզ պատած դժվարությունների, ձեր առջև ծառայած մարտահրավերների մասին: Արցախյան վերջին պատերազմում մեր թանկագին զավակները նահատակվեցին, ունեցանք վիրավորներ, անհայտ կորածներ, գերեզարկվածներ, տանայակ հազարավոր տեղա-

հանված խաղաղ բնակիչներ: Տարածքային կորուստների պատճառով նաև Սյունյաց աշխարհի բնակավայրեր սահմանամերձ դարձան Ադրբեջանի հետ՝ որակից բխող խիստ մտահոգիչ հետևանքներով: Ադրբեջանը սանձարձակ ոտնձգություններ է կատարում նաև Հայաստանի սահմանների նկատմամբ, մասնավորապես Սյունիքի, Գեղարքունիքի գյուղական որոշ համայնքների տարածքների հանդեպ», – ասաց Հայրապետը:

«Սիրելիներ, խոռովի մեջ է ամենքիս հոգին, խոռովի մեջ է համայն հայությունը: Սյունյաց աշխարհի մեր զավակներդ ստեղծագործ ու խաղաղ կյանքի բնականոն ընթացք է խաթարված, ավելին՝ ապահովության ու անվտանգության լրջագույն խնդիր է հառնած: Սակայն Մենք գիտենք, որ ձեր ոգին անկոտորում է, ձեր հարազատ հոգին կապալածությունը, հայրենասիրությունն ու ազգամուտքը ամուր են ձեր սրտերում ու հոգիներում: Դուք ձեր պապերից ու հայրերից ժառանգել եք բաշտություն ու կորով՝ օրհասական հանգամանքներում ձեր հայրենի տունն ու օջախը պաշտպանելու, անսասան լինելու հայրենյաց պաշտպանության դիրքերում և արհաբար կանգուն մնալու հարազատ հոգին: Այս փորձությունը ևս, բաջարի սյունեցիներ, ազգովի կհաղթահարենք՝ միայն թե, մեր հերոս նախնիների ոգեշունչ պատգամի համաձայն, մեր արհուրյան ու բաջության մեջ վախկոտություն չհաստենք, ամուր պահենք մեր նվիրումը հայրենիքին ու մեր սրբազան արժեքներին: Հաստատուն մանր հավատի մեջ, անկոտորում՝ նեղությունների ու դժվարությունների առջև: Ամուր պահենք միմյանց հանդեպ քրիստոսապատվեր սերն ու հզոր միասնությունը, որի առջև նահանջում են փորձությունները և գործերում ու ամրակող են վատագույնագույն ոգին», – ասաց Լո-

րին Սրբությունը՝ հավելելով, որ Հայոց Եկեղեցին և եկեղեցականները հանապազօրյա իրենց աղոթքով ու ծառայությամբ սյունեցիների կողքին են՝ Աստուծո խոսքով գորացնելու, դժվարությունների ու փորձությունների մեջ Տիրոջ օգնության խոստումը փոխանցելու, Լրանց խիզախությունն ամուր պահելու:

Վեհափառ Հայրապետը տեղեկացրեց, որ Հայոց Եկեղեցին թե՛ պատերազմի ընթացքում և թե՛ հետպատերազմյան օրերին իր ծայն է բարձրացրել միջազգային, միջեկեղեցական, միջկրոնական ատյաններում Արցախի և Հայաստանի դեմ իրականացվող ոտնձգությունները խստորեն դատապարտելու կոչով, գերիների ազատ արձակման համար հրատապ աշխատանքներ իրականացնելու հորդորով և ի պաշտպանություն Արցախի մեր ժողովրդի ազատ ու անկախ կյանքի արդար իրավունքի:

Հայոց Հայրապետը հայցեց, որ Բարձրյալ Տերը օգնական ու գորակից լինի ամենքին՝ մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության գործում ճշմարտությունը ճանաչելի դարձնելու և արդարության հասնելու ջանքերը արդյունավորելու: Լորին Սրբությունը նաև աղոթեց, որ Աստված խաղաղ ու անվրդով պահի հայրենի մեր երկիրը, և Տիրոջ պահպան Սուրբ Աջի առջև նահանջն բոլոր չարիքներն ու փորձանքները մեր կյանքից:

Արարողությունից հետո հայրապետական պատմիրականությունը այցելեց Գորիսի գինվորական պալատ, ուր Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀԲԸՄ նախագահ Պերճ Մեդրակյանը ծաղկեպսակներ գետեղեցին անմար կրակի և հիշատակի խաչքարի առջև, ապա Արցախյան երկրորդ պատերազմում զոհված բաջորդիների շիրիմների առջև Լորին Սրբության գլխավորությամբ հոգևոր դասը աղոթեց նրանց հոգիների հանգստության համար:

Լույս օրը Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատմիրականությամբ այցելեց Շուշուխ սահմանամերձ համայնք:

Փոխանցելով ժողովրդին իր հայրական սերն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը՝ Լորին Սրբությունն իր գորակցությունը բերեց շուշուխցիներին: Վեհափառը նշեց, որ սյունեցիները ազգային-ազատագրական պայքարում իրենց աննյուն ու անպարտ ոգու շնորհիվ դարերի մեջ բաջերի համբավ են վատակել և մեր օրերում ևս սահմա-

նին սյունյաց բաջերի ինքնակազմակերպված խմբերի գրևորած արհուրյունն ու հայրենի հողը պաշտպանելու հարցում սկզբունքայնությունը ևս այդ ոգու անուրանալի արտահայտությունն են:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը և ՀԲԸՄ նախագահը բնակիչների հետ զրուցեցին տիրող անհանգստությունների ու առկա խնդիրների, կյանքի բնականոն ընթացքի խաթարման և վտանգների մասին:

Իր զրույցում Լորին Սրբությունը հավատաստացրեց, որ Հայոց Եկեղեցին պիտի շարունակի ջանքեր գործադրել բարձրածայնելու սահմանամերձ համայնքներում բնակվող մեր ժողովրդի խնդիրները և հետամուտ լինելու իրավունքների պաշտպանությանը, ապա հորդորեց նախյաց օրհնակով ամուր և աննահանջ մնալ իրենց հավատի և հույսի մեջ՝ կառչած հարենի հողին, իրենց օջախներին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն այցելեց նաև շուշուխցիների տներ, զրուցեց ընտանիքների հետ, ծանոթացավ առկա դժվարություններին:

Լորին Սրբությունը նաև իր օրհնություններն ու բարեմաղթանքները բերեց շուշուխցի նորապսակ մի զույգի, որ տեղեկանալով Հայոց Հայրապետի այցի մասին, մասնավոր ցանկություն էր հայտնել արժանանալու հայրապետական օրհնության:

Վերադարձին Ամենայն Հայոց Կաթողիկոսը զրույց ունեցավ Կապանի համայնքապետ Պերճ Փարսյանի հետ:

Երեկոյան Հայոց Հովվապետը հանդիպում ունեցավ Սյունյաց թեմի հոգևոր դասի հետ՝ եկեղեցականներին վերստին բերելով իր հայրական օրհնությունն ու գնահատանքը իրենց նվիրյալ ծառայության համար:

Հանդիպմանը բնակավեցին հետպատերազմյան շրջանում առկա դժվարին իրավիճակում, Եկեղեցու կողմից ձեռնարկվող բաջերի, իրականացվող սոցիալական, հոգեբանական ծրագրերին:

Լորին Սրբությունը թեմի հոգևոր սպասավորների ուշադրությունը մասնավորապես հրավիրեց գոհվածների, անհայտ կորածների և գերության մեջ գտնվողների ընտանիքներին, վիրավորներին և նրանց հոգևոր խնամքին:

ՄԱՅՐ ԱԹՈՒՒ ՏԵՐԵՎԱՍԿԱԿԱՆ ՂԱՍԱԿԱՆՊ

ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ. «Պետք է ապահովել յուրաքանչյուր բաղաբացու ազատ կամարտահայտությունը. հնարավոր բոլոր հանցավոր արարքներին կհետեվի համարժեք պատասխանատվություն»

Սկիզբը՝ էջ 2

հնարավորություն չօգտագործվի որեւէ աշխատակցի դեմ առաջիկա ընտրությունների համատեքստում, ոչ մի դեպքում կոմբինատի որեւէ լծակ չօգտագործվի: Այ, եթե այսքան նախագուշակական աշխատանքներից հետո այդպիսի փորձ տեղի կունենա, կարծում եմ, ոչ միայն օրինական, այլև բարոյական իրավունքները կավելանան՝ նրանց պատասխանատվության ենթարկելու հարցը բարձրացնելու համար:

– Մայիսի 12-ից թշնամին Սյունիքում է. դատելով Ադրբեջանի պահվածքից, չի բացառվում, որ ընտրությունները խափանելու կամ երկրում լարվածությունը սրելու նպատակով նոր սադրանքներ լինեն. հետաքրքիր է՝ ընտրությունների կապակցությամբ՝ հունիսի 20-ի նախօրյակին կամ այդ օրը, անվտանգության լրացուցիչ միջոցառումներ կծեռնարկվեն Սյունիքում՝ պետական սահմանների անվտանգության ապահովման և առհասարակ հնարավոր սադրանքները կանխելու նպատակով:

– Իհարկե, ձեռնարկվելու են անվտանգության միջոցառումներ, որոնք իրավիճակին բնորոշ ավելի խստացվելու են, ավելի ուժեղացվելու են: Կարելու է, որ հենց մեր ընտրողը, ընտրական գործընթացի բոլոր պատասխանատուները բաղաբացիական բարձր գիտակցումով մոտենան այդ խնդրին: Մենք բոլորս պետք է շահագրգիռ լինենք, որ-

պեսզի խաղաղ եւ կայուն միջավայր ապահովենք հունիսի 20-ին, որ մեր բաղաբացին ազատ, հանգիստ, առանց որեւէ վերահսկողության կարողանա իր ընտրությունն իրականացնել:

– **Ձեր խոսքը սյունեցիներին:**
– Իմ խոսքը մասնագիտական խոսք է. ինձ երաշխավորն եմ համարում, ինձ հանձնառու եմ համարում, որ ՀՀ յուրաքանչյուր բաղաբացի անխոչընդոտ՝ իր խղճով ընտրություն կատարի: Ես ուզում եմ կոչ անել մեր այն բաղաբացիներին, ովքեր ակնատես կլինեն կամ ինչ-որ կերպ կտեղեկանան ընտրական քննարկի որեւէ հանցագործության մասին՝ չվարանել, անհապաղ դիմել իրավապահ մարմիններին, որովհետեւ մեր երկրում հունիսի 20-ին օրինական, արդար ու թափանցիկ ընտրություններ կայացնելու գերխնդիրը բոլորինս է՝ ՀՀ յուրաքանչյուր բաղաբացուն:

– **Հաջողություն եմ ձեզ մաղթում՝ համոզված լինելով, որ նման հետետղականության դեպքում ընտրական հանցագործությունները նվազագույնի կհասցվեն:**

– Շնորհակալ եմ, ես էլ ձեզ եմ ուզում կոչ ուղղել՝ եղած հնարավորություններով, կոչելով, ճանաչած մարդկանցով, ձեռքի տակ ունեցած տեխնիկական հնարավորություններով անպայման արձագանքել ընտրական խախտումներին:

ՀՐԻՒՅՑԸ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԵՐՄԱՆՅԱՆԻ



Աշխատանքային այցով Սյունիքում էր ՀՀ-ում Ռուսաստանի դեսպանը

Սկիզբը՝ էջ 1

գային իշխանությունների, թե՛ Սյունիքի ողջ բնակչության համար ամենաառաջնային հարցն այժմ անվտանգությունն է, ու այն պահպանելու գործում անմիջական մասնակցություն ունի Ռուսաստանը, որի համար շնորհակալություն հայտնեց:

Մեխբետե Պողոսյանը ռուսական կողմին անվտանգային ու սահմանային խնդիրների լուծման հարցում ավելի գործուն մասնակցության առաջարկներ արեց: Մարզպետը ուշադրություն հրավիրեց նաեւ մի շարք հարցերի վրա՝ հակառակ կողմի՝ մեր տարածքների սահմանն ու բնակեցությունների ժամանակ վկայաբերվող կեղծ բարոնետների,

սահմանային հատվածներում չեզոք գոտու բացակայության ու մեր ճանապարհներին գինված աղբեղանցիների առկայությունը եւ այլն: Մարզի ղեկավարը խնդրեց հյուրերին նաեւ քայլեր անել ռուս զբոսաշրջիկների հոսքն ու հետաքրքրվածությունը դեպի Սյունիք ուղղելու հարցում, քանի որ հետպատերազմյան շրջանում Սյունիքում երբեմնի ակտիվ զբոսաշրջային ոլորտը վտանգված է:

Մեխբետե Պողոսյանը շնորհակալություն հայտնեց ռուսական սահմանապահ ծառայության ներկայացուցիչներին՝ նշելով, որ գրեթե ամեն օր նրանց միջամտությամբ խնդիրներ են հարթվում:

ՊԱՏՐԱՍՏԵՑ ՏԻԳՐԱՆՈՒՅԻ ԲԱՂԱՆՅԱՆԸ



ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանը խորհրդակցություն է անցկացրել Սյունիքի մարզի դատախազությունում

Հունիսի 7-ին Սյունիքի մարզի դատախազությունում տեղի ունեցավ օպերատիվ խորհրդակցություն՝ ղեկավարությամբ հանրապետության գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի:

Խորհրդակցությանը մասնակցում էին Սյունիքի մարզային Մեյլիքետե Պողոսյանը, Սյունիքի մարզի դատախազ Էդուարդ Հարությունյանը, Գորիսի կայազորի զինվորական դատախազ Հայկ Մարգարյանը, Կապան համայնքի ղեկավար

Գեւորգ Փարսյանը, Հայաստանի քննչական կոմիտեի Սյունիքի մարզային վարչության պետ Արման Աղասարյանը, ԱԱԾ Սյունիքի մարզային վարչության պետ Արտակ Հարությունյանը, Ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետ Ալիկ Մամիկոնյանը, Սյունիքի մարզային դատախազության դատախազներ Եւ իրավապահ ոլորտի այլ պաշտոնատար անձինք:

Գլխավոր դատախազը ներկայացրեց խորհրդակցության նպատակը՝ Աժ արտա-հերթ ընտրությունների կազմակերպման և

օրինական անցկացման համար ձեռնարկվելիք քայլերը:

– Բոլորիս պատրաստակցում են երկրի անվտանգությունը և սահմանային խնդիրները, բայց մեր երկրի համար չափազանց կարևոր նշանակություն ունի հունիսի 20-ին կայանալիք խորհրդարանական արտահերթ ընտրությունը, – ասաց Արթուր Դավթյանը: – Իրավապահ մարմինները, պետական բոլոր կառույցները և ընտրական գործընթացի կազմակերպմանն առնչող մարմինները պարտավոր են ձեռնարկել հնարավոր ու անհնարին միջոցները, որպեսզի կարողանանք ապահովել օրինական, թափանցիկ և օբյեկտիվ ընտրություն: Կատարե՞լ բոլորը շատ լավ գիտակցում եք այդ ամենի կարևորությունը:

Ընտրողների ազատ կամարտահայտության համար պատշաճ պայմանների ստեղծումն Արթուր Դավթյանը համարեց գլխավոր առաջնահերթություն:

Հանրապետության գլխավոր դատախազը անթույլատրելի համարեց վարչական

ռեսուրսի կիրառման ցանկացած դեպք, նաև հիշեցրեց, որ ՀՀ Քրեական օրենսգրքի փոփոխությունից հետո առկա է նոր հողված, որը պատիժ է սահմանում նախընտրական քաղաքական խոչընդոտելու դեպքերի համար: Խորհրդակցությանը հրավիրվել էր նաև «Չանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ Թոմաս Հոֆմանը, ով հավաստիացրեց, որ հանքարդյունաբերական այդ ընկերությունում բացառվում է աշխատակիցների վրա որևէ ազդեցության գործադրումը՝ ցանկացած ձևով, քանի որ իրենք հարգում են յուրաքանչյուրի ընտրության իրավունքը:

Արթուր Դավթյանը հույս հայտնեց, որ այդ հավաստիացումը համապատասխանում է իրականությանը:

ՀՀ գլխավոր դատախազը նաև կոչ ուղղեց ընտրողներին՝ իրենց իրավունքների ոտնահարման դեպքում անապայման տեղյակ պահել իրավապահ մարմիններին՝ հավաստիացնելով, որ ընտրական իրավունքի խախտման ամեն մի դեպք հասուկ քննարկման առարկա կդառնա:

Առանձնահատուկ շեշտադրմամբ անդրադարձ կատարվեց նաև մարզի իրավապահ մարմինների գործունեությանը, որոնք ամենայն պատասխանատվությամբ պետք է հետեւեն նախընտրական գործընթացներին և ընտրության օրինական կազմակերպմանը:

Ընտրության օրինական և կազմակերպված անցկացումն Արթուր Դավթյանը համարեց արժանապատվության խնդիր իրավապահ մարմինների համար:

– Եթե անգամ մեկ իրավախախտում լինի, որը համապատասխան ձեռով չբացահայտվի ու չպատժվի, ես կհամարեմ անձնական վիրավորանք. ուզում եմ, որ իրավապահ համակարգի յուրաքանչյուր աշխատակից իր պարտքը համարի ամեն մի իրավախախտման հայտնաբերումն ու պատշաճ քննությունը, – ասաց Արթուր Դավթյանը:

Այնուհետև խորհրդակցությունը շարունակվեց առանց լրագրողների մասնակցության:

ՏԻԳՐԱՆՈՒՅԻ ԲԱԴԱՆՅԱՆ



ԿԳՄՍ նախարարի պաշտոնակատար Վահրամ Դումանյանն աշխատանքային այց է կատարել Սյունիքի մարզ

Կարևորելով սահմանամերձ համայնքներում դպրոցաշինական ծրագրերի իրականացումը, հանրակրթական, միջին մասնագիտական և բուհական կրթության զարգացման ծրագրերի իրագործումը, ինչպես նաև առկա խնդիրներին արագ արձագանքելու անհրաժեշտությունը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի պաշտոնակատար Վահրամ Դումանյանն աշխատանքային այց է կատարել Սյունիքի մարզի Գորիս համայնք: Ինչպես տեղեկացրին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությունից, Վահրամ Դումանյանի այցը մեկնարկել է Գորիսի թիվ 1 ավագ դպրոցից, որտեղ իրականացվում

են հիմնանորոգման աշխատանքներ: Նախարարը շրջել է դպրոցի տարածքում, ծանոթացել հիմնանորոգման աշխատանքների ընթացքին, գրուցել շինարարների, դպրոցի տնօրենի և ուսուցչական կազմի հետ: Լշեք, որ Գորիսի թիվ 1 ավագ դպրոցի հիմնանորոգումն իրականացվում է Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության համատեղ ֆինանսավորմամբ:

Սահմանամերձ համայնքներում միջին մասնագիտական կրթության ապահովման և զարգացման համատեքստում Վահրամ Դումանյանը, Սյունիքի մարզային Մեյլիքետե Պողոսյանի ուղեկցությամբ, այցելել է Գորիսի պետական թուղթ:

Ողջունելով թուղթի տնօրինությանն ու

աշխատակիցներին՝ Վահրամ Դումանյանը խոսել է նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտում առկա խնդիրների, նախատեսվող բարեփոխումների մասին: Նախարարի պաշտոնակատարն իր խոսքում նշել է, որ կարևորում է սահմանամերձ համայնքներում նախնական և միջին մասնագիտական կրթության զարգացման ծրագրերի իրագործումը, ինչպես նաև առկա խնդիրներին արագ արձագանքելու անհրաժեշտությունը:

ԿԳՄՍ նախարարի պաշտոնակատարը տնօրենի հետ քննարկել է միջին մասնագիտական կրթությանն ու ոլորտին առնչվող մի շարք հարցեր, շրջել շենքով, ծանոթացել բոլոր նյութատեխնիկական բազային, շենքային պայմաններին, կառուցվող ապաստարանին:

Քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանը Վահրամ Դումանյանին շնորհակալություն է հայտնել Սյունիք կատարած այցի շրջանակում քուլտուրալ հյուրընկալվելու համար:

Կարեն Լազարյանը նախարարի պաշտոնակատարին է ներկայացրել բոլոր նյութատեխնիկական բազայի արդիականացման, շենքային պայմանների բարելավման, շենքի ջեռուցման և տարածքի ջրահեռացման խնդիրները, որոնք առաջնահերթ լուծում են պահանջում:

Վահրամ Դումանյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի պաշտոնակատար Անդրանիկ Փիլոյանը, ՀՀ Ազգային ժողովի՝ Սյունիքի մարզից ընտրված պատգամավորները, Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը և Սյունիքի մարզային Մեյլիքետե Պողոսյանը մասնակցել են Գորիսի թիվ 4 ավագ դպրոցի «Վերջին դասին»՝ նվիրված միջոցառմանը, ինչպես նաև այցելել են Սերո Խանգույանի անվան թիվ 6 հիմնական դպրոց, որտեղ ևս աշակերտները տոնական հանդիսություն են ներկայացրել:

Սյունիք կատարած այցի շրջանակում Վահրամ Դումանյանն այցելել է նաև Գորիսի պետական համալսարան:

Եվրամիության դեսպանի այցը Կապան

Հունիսի 2-ին Կապան համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանն հանդիպում է ունեցել Հայաստանում Եվրամիության դեսպան Անդրեա Վիկտորինի և Համագործակցության բաժնի ղեկավար Գոնգալո Սեռանոյի հետ: Ողջունելով դեսպանի այցը Կապան՝ համայնքի ղեկավարը շնորհակալություն է հայտնել մինչ այժմ ԵՄ-ի աջակցությամբ համայնքում իրականացված ծրագրերի համար: Հանդիպմանը ներկա են գտնվել նաև «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի հայաստանյան գրասենյակի տնօրեն Վարդուհի Դադունցը, համայնքի ղեկավարին կից երիտասարդական խորհրդի անդամները, համայնքապետարանի աշխատակիցները:

Գեորգ Փարսյանի ուղեկցությամբ դեսպանն այցելել է Վազգեն Սարգսյանի անվան մանկական զբոսայգի, որտեղ զբոսայգու տնօրեն Կառլեն Հայրապետյանը մանրամասն ներկայացրել է ԵՄ-ի աջակցությամբ և «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ի գործընկերությամբ իրականացված ծրագրերը: Այդ ծրագրերի շրջանակներում զբոսայգու և համայնքապետարանի տարածքում տեղադրվել են ստարաններ, փոխվել է զբոսայգու լուսավորության համակարգը, ինչպես նաև կառուցվել է խաղահրապարակ Դավիթ Բեկ թաղամասում: Իր խոսքում Կ. Հայրապետյանը կարևորել է հատկապես այդ թաղամասում խաղահրապարակ կառուցելու ծրագիրը, քանի որ այն իրականացվել է համայնքապետարան-քննկիցներ-ԵՄ փոխհամագործակցության արդյունքում:

Դեսպանը գրուցել է նաև երիտասարդների հետ՝ ծանոթացել նրանց կողմից բարձրացված խնդիրներին, գործունեությանը և ծրագրերին:

ՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՍԱՆՈՒՆ

Չավերով փառք Արցախյան պատերազմում Նահատակված հայոց քաջորդիներին



Էդուարդ Շահնազարյան. նրա սրտում միայն բարոյությունը տեղ ուներ

Էդուարդ Կարոյանի Շահնազարյան ծնվել է 1994 թ. փետրվարի 6-ին Այուսիքի մարզի Կապան քաղաքում: Սովորել է Կապանի N 27 գիշերօթիկ դպրոցում: 2001 թ. ընտանիքը տեղափոխվել է Արցախի Չարոյի վարչական շրջանի Մեխակավան (Ջրական) Չաբրախի բնակավայր, որտեղ եւ ավարտել է միջնակարգ դպրոցը: Այնուհետև ընդունվել է Այուսիքի տարածաշրջանային պետական բուհը:

2012 թ. զորակոչվել է Ֆայոց բանակ: Ժամկետային զինծառայության ավարտից հետո շարունակել է ծառայությունը զինված ուժերում ՊԲ Ջրականի զորամասում՝ ԱԿՀ տեխնիկ-օպերատոր:

2017 թ. ընդունվել է Ստեփանակերտի Գրիգոր Լաբիգյան անվան համալսարանի պատմության բաժին:

Սորաքայրը մոր նման սիրով պահում է, հիշում էդուարդի ամեն բանը, հայացքը, ինչ էր սիրում, ինչի հետ չէր հաշտվում: «*Էդուարդս Արցախում մեծացավ, մի օր ինձ հարցրեց, թե ինչն է երբեք Կապանում դարբանացի, իսկ Արցախում հայաստանցի ասում: Շատ ուշադիր էր, նկատում էր յուրաքանչյուր թերություն, կյանքով լցված էր: Սիրում էր կյանքը, ճանապարհորդել էր սիրում: Նա երբեք չէր խոսում իր աշխատանքից, գաղտնապահ էր, ու դա նրա լավ հատկանիշներից մեկն էր. նրա կորուստը մեզ համար անասելի տանջանք է...*»:

Էդուարդի ընկեր Արթուր Մազբերյուկի հետ ենք զրուցում: Արթուրի ծայր դողում է ընկերոջ մասին խոսելիս: «*Էդուարդի հետ ծանոթացել եմ, երբ ժամկետային զինծառայող էի, ինքը նույն զորամասում պայմանագրային ծառայող էր: Ընկերացանք, շատ-շատ էի լինում նրանց ջերմ ու հյուրասեր օջախում, նա հիասթափողոր հոգի էր, օգնում էր ծնողներին, չնայած բոլորին էր օգնում: Ներողամիտ, հումորով, ակտիվ, ժամանակակից տղա էր, անպայման ուզում եմ շեշտել բարոյությունը, դե բարոյությունը տարբեր ձևեր չի ունենում, նա հենց բարի մարդ էր, ով ճանաչել է նրան՝ կհաստատի, նրա սրտում միայն բարոյությունը տեղ ուներ...*»:

Էդուարդ Շահնազարյանը վայելում էր ծառայակիցների ու սպայական անձնակազմի հարգանքը, 2020 թ. մայիսին պարզեատրվել է «Անբասիր ծառայության համար» առաջին աստիճանի մեդալով:

Էդուարդի հետ ծառայողներից շատ քչերն են այսօր մեր կողքին, բանի որ Ջրականի զորամասը 2020 թ. սեպտեմբերի 27-ին առաջիններից մեկն էր, որ հրետակոծության ենթարկվեց. հոկտեմբերի 1-ին Էդուարդ Շահնազարյանը վիրավորվել է, հոկտեմբերի 9-ին՝ անմահացել...

Լրակնք, ուվեր կան, իրենց զոհված ընկերների մասին խոսելիս արցունքները չեն թաքցնում. «*Մեր ընկերների արյան վրեժը լուծելու ենք, մերոնց սուրբ արյունը չենք ներելու...*»:

Կյանքը հայրենիքին նվիրաբերած հերոսը պարզեատրվել է «Մարտական ծառայության» մեդալով՝ հետմահու:



Սամսոն Ամարյան. «Ես փախչողի վրա ծիծաղում եմ, ես պիտի կռվեմ մինչև վերջ»

Ամարյան Սամսոն Ռաչիկի, ծնվել է 1988 թ. նոյեմբերի 15-ին Գորիսի շրջանի Բռուն գյուղում: Սամսոնը տասը տարեկան էր, երբ ընտանիքը տեղափոխվեց Սիսիան: Ընտանիքի միակ որդին էր, երկու քույր եւ մոր միակ հենարանը, բանզի հայրը վաղաժամ էր հեռացել կյանքից:

Ընտանիքը տեղափոխվել է Այուսիքի մարզի Սիսիան քաղաք, երբ Սամսոնը տասը տարեկան էր: Միջնակարգ ավարտելուց հետո զորակոչվել է բանակ, ծառայել Ստեփանակերտում:

2009 թ. պայմանագրային ծառայության է անցել Սիսիանի զորամասում, ապա տեղափոխվել Լորավանի զորամաս:

2010թ. ընդունվել է 2015 թ. ավարտել է Ազգային պարային համալսարանի անասաբուժական սանիտարական փորձաքննության բաժին:

Պայմանագրային Սամսոնն ապագայի բազմաթիվ ծրագրեր ուներ. ընտանիքի անդամների ասել էր, որ 10-օրյա արձակուրդ է վերցնելու, հարսանիք է անելու, բայց...

Սեպտեմբերի 27-ին Արթուրյան պատերազմ սկսեց. Սամսոնը ես միացավ Արցախի օգնության շտապող զինվորներին:

Քույրը, ով անհանգստանում էր թե՛ եղբոր, թե՛ ամուսնու համար, մի օր չի դիմացել, խնդրել է եղբորը վերադառնալ, Սամսոնը բարկացել է. «*Մենք փախչողների վրա ենք ծիծաղում, դու ասում ես վերադարձե՛ք, ես պիտի կռվեմ մինչև վերջ...*»:

Սամսոնն անհանգստանում էր, որ մայրը կիմանա իր Արցախում գտնվելու մասին ու չի դիմանա, գանգահարում էր ամեն օր՝ հիշեցնում դեղերի ընդունման ժամը, խնդրում, որ մայրն ուշադիր լինի իր առողջության նկատմամբ: Սամսոնը հարազատներին ասել էր, որ իրեն ոչ թե զոհվելու է անհանգստացնում, այլ մոր թույլ առողջությունը...

Յոթնամյակի 10-ին Սամսոնը նկատում է թշնամու անօդաչուն, դուրս է գալիս ապահով թաքստոցից, որ զգուշացնի ընկերներին, հասնում է՝ կատարում իր մտադրությունը, բայց արկերից մեկը նրան շատ մոտ է ընկնում եւ ընդհատում Սամսոնի կյանքն ու մարտական ուղին... "



Կարեն Ստեփանյան. ամենաթանկը տվեց հայրենիքին

Կարեն Ռուբիկի Ստեփանյան. ծնվել է 1979 թ. մարտի 11-ին Սիսիանի Ծաղատ գյուղում: Սովորել է Գերագան

առաջադիմությամբ ավարտել է Ծաղատի միջնակարգ դպրոցը: Պարտադիր զինվորական ծառայությունն անց է կացրել Օմարում: Ամուսնացած էր, ունի երկու երեխա:

2008 թ. ամուսնանում է. ընտանիքի միակ որդին էր ու ազգանունը շարունակելու, Ծաղատում Ստեփանյան գերդաստանի Ռուբենի ճյուղի ապագան ապահովելու պատասխանատվությունը Կարենի ուներին էր:

Անին ամուսնու մասին կարոտով ու ցավով էր խոսում. «*Յրաշալի ամուսին եմ ունեցել, նա շատ լավ հայր էր, երեխաներս՝ մի աղջիկ ու մի տղա ունենք, մի տեսակ չեն պատկերացնում, որ իրենց հայրն այնքա երբեք չի գալու. սովոր էին հայրիկին ուշ-ուշ տեսնել, բայց... Մենք մեր ամենաթանկն ենք տվել հայրենիքին, չգիտեմ էլ՝ հպարտ ենք, թե՛ ինչ, բայց սա անտանելի ցավ է...*»:

2009 թ. Կարեն Ստեփանյանը պայմանագրային ծառայության է անցել է Սիսիանի զորամասում, պաշտպանում էր հարազատ գյուղին մոտ գտնվող սահմանները: Ընկերները պատմում են, որ Կարենի հետ ժամանակն աննկատ էր անցնում, կարողանում էր հետաքրքիր թեմաներ գտնել՝ «*Նրա հետ երկար տարիներ դիրք ենք պահել, միասին վերջին բաժակ ջուրն ու հացն ենք կիսել: Ծառայության ընկերությունն ուրիշ բան է, ուրիշ է, երբ դու չես թնում, որ ընկերը մի կես ժամ ավելի քնի, մերոնցից շատերը զոհվեցին, ոչ մեկին չենք ուզում առանձնացնել, բոլորն էլ մեր եղբայրներն են ու մենք իրենց պարտք ենք...*»:

2020 թ. հոկտեմբերի 8-ին ականանետորդ Կարեն Ստեփանյանը մեկնում է Արցախ, մասնակցում Գարմիթի Շուկայի պաշտպանության մարտերին, ապա տեղափոխվում Կարանդա/Ֆիզուլի:

Յոթնամյակի 15-ին թշնամու անօդաչուն թիրախավորել է մեր հրետանավորներին տեղափոխող մեքենան, զոհվել է Կարենը. ընկել է հավառոտ, որ հաղթանակը մերն է լինելու, որ իր ու ընկերների արյունով ներկված հողի տերը հայն է մնալու... "



Արշակ Փարամազյան՝ անմահացած անուն...

Կապանի Արամ Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի ճեմասրահում անկյուն է ձևավորվել՝ նվիրված մերօրյա պատերազմի նահատակ Արշակ Փարամազյանին: Նաեւ հուշ-ցերեկույթ է կազմակերպվել հայրենիքի պաշտպանի պատվին, ով ընդամենը 37 գարուն ապրեց: Մարտական ընկերները, հարազատները, մտերիները զսպված հուզմունքով, անսթղ պիսոսանքով են ծանոթանում Արշակի մասին պատմող ցուցանմուշներին: Հետո տեղափոխվում կրթօջախի դահլիճ, որտեղ հյուսվում են պատմություններն ու հուշերը Փարամազյանների հիմնվող տոհմի լավագույն որակները կառո Արշակ անձնավորության է հայրենիքի պաշտպանի մասին:

N զորամասի հրամանատարի տեղակալ, փոխգնդապետ Արթուր Մարտիրոսյանը ներկաներին տեղափոխում է 2004-2005 թվականները՝ Արշակի հետ համատեղ ծառայության օրերը. «*Ինձ բախտ է վիճակվել պարտադիր զինծառայության օրերից ճանաչել Արշակին եւ ի սկզբանե նա մեզ սովորեցրեց՝ առնական, շիտակ, շրջապատին նվիրված անձնա-*

վորություն: Դասակի հրամանատար էր, բայց իր ստորաբաժանումն ավելի կարգապահ եւ օրինակելի էր, բան որոշ սպայական ուսադիրներով զինվորականներին: Կարճ ժամանակում կարողացավ վայելել հրամանատարների ու ծառայակիցների սերն ու հարգանքը: Իրերի բերումով 2-րդ անգամ Արշակին հանդիպեցի 2020 թ. հեկտեմբերին, երբ մեր երկրի վրա սպառնալիք էր կախված: Վերհիշեցինք 15 տարվա վաղեմությունն ունեցող մեր բանակային ծառայության օրերը, դեպքեր եւ իրադարձություններ: Ո՛վ իմանար, որ դա մեր վերջին հանդիպումն էր լինելու...»:

Մանկավարժների՝ Հրաչիկ Փարամազյանի եւ Էվմիրա Մկրտչյանի ավանդապաշտ ընտանիքում է ծնվել Արշակը: Բարձր առաջադիմությամբ է ավարտել Կապանի թիվ 27 գիշերօթիկ դպրոցը՝ ապա Յայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի Կապանի մասնաճյուղը՝ տնտեսագետի մասնագիտությամբ: 2004-2006 թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում: Մեր թերթում («Այոնյաց երկիր», 17 հուլիսի 2005 թ.) տպագրված «Շնորհակալական նամակ» վերտառության թղթակցության մեջ պատմվում է նրա օրինակելի ծառայության մասին եւ երախտագիտություն հայտնվում ծնողներին:

Յոթ տարի աշխատել է բանակային համակարգում վաստակելով հարգանք՝ բաղաբաղի՞ր ու մարդկանց հանդեպ բարյացակամ վերաբերմունքով: 2014-ին տեղափոխվել է լեռնահանքային արդյունաբերություն, ավելի ստույգ՝ «Ձանգեղուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերություն՝ տնօրենի օգնական, ապա վարչական դեպարտամենտի ճաշարանի վարիչ՝ ամենուր հարգանք ու սեր վայելել՝ դիմացիկ հանդեպ ուշադիր ու սրտացավ լինելու շնորհով:

Կնոջ՝ Ստեփանի փոխանցմամբ ուշադիր էր իր եւ երեխաների հանդեպ, անմասնորդ նվիրված էր ընտանիքին: Պատերազմի լուրն առնելով՝ խնդրեց պատրաստել անհրաժեշտ իրերը եւ զինվորական զբոսով: Հրաժեշտ տալիս էլ խոստացավ՝ անպայման վերադառնալ: Ավար...

2020թ. հոկտեմբերի 13-ին Ջրականի (Չաբախի) մատուցներում ընկավ հակառակորդի անօդաչուի արձակած արկից:

Հանրամատչելի անօդաչուով պարգեատարվել է «Մարտական ծառայություն» մեդալով, Կապանի համայնքի ղեկավար Գեորգ Փարսյանի կողմից՝ «Կապան» հուշամեդալով:

Արշակի մասին հուշերով, գնահատանքի խոսքերով հանդես եկան նրա դասընկ Ստեփան Սարգսյանը, համադասարանցի Արտաշես Աթայանը, իսկ հոր՝ Հրաչիկ Փարամազյանի խոսքն ավելի բան հուզիչ էր. «*Ծեմ ուզում խոսել հնարված պատերազմի, նաեւ հնարովի պարտության մասին, որ մոտ 5000 երիտասարդի կյանք խլեց: Արշակը գնաց եւ իր հետ տարավ մեր բոլորի սպասումները, իր ձեռքը, նպատակները: Բայց իր եւ իր նման անձնագրի տղաների շնորհիվ մեր հայրենիքը չի մեռնելու: Հիշենք Նժդեհի խոսքը՝ հայրենիքն ապրում է հայրենասիրությամբ եւ մեռնում նրա պակասից: Արշակի եւ իր նման տղաների շնորհով համոզվեցինք, որ մեր հայրենիքը հայրենասիրության պակաս չունի: Թող մտածեն նրանք, ովքեր երկիրը հասցրին այս վիճակին...»:*

Մոր՝ Էվմիրա Մկրտչյանի՝ Արշակին նվիրված բանաստեղծությունն ասումքեց զոհվածի ավագ որդի Հրաչ Փարամազյանը: Անտարակույս, սփոփանք է այն, որ որդիները՝ հոր եւ պապի անունները կրող Հրաչն ու Մխիթարը, կգորանան ու կշարունակեն իրենց հոր անավարտ թողած գործը...

Երեկոն եզրափակվեց Կահանավանքի հոգեւոր հովիվ տեր Ավետիք բահանա Մարտիրոսյանի սփոփիչ խոսքով:

ԿԱԶՐԱՍ ՕՐԲԵՆԱՆ
//
**ԷՅԻ ՆՅՈՒԹԵՐԸ
ՊԱՏՐԱՍՏԵՑ ՏԻԳՐԱՆՈՒԻ
ԲԱՂԱՆԱՆԸ**



Հուշադրյուր հարգանքի և անմահության

Կապանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 7 դպրոցը 44-օրյա պատերազմում իր շրջանավարտներից անդառնալի կորուստներ ունեցավ՝ Շավարշ Մուրադյան, Գրիշա Թումանյան, Արեգ Հակոբյան: Նահատակների հիշատակը անմահացնելու համար կրթօջախի բակում տեղադրվել է հուշադրյուր, որի բացումը տեղի ունեցավ հունիսի 10-ին: Մերօրյա պատերազմի նահատակների հիշատակի ոգեկոչմանը մասնակցում էին մարտի դաշտում ընկածների հարազատներն ու մտերիմները, Սյունիքի մարզպետ Մելիքսեթ Պողոսյանը, Կապանի համայնքապետ Գեորգ Փարսյանը, Արցախյան ազատամարտերի մասնակիցներ, հուշադրյուր-բանդակի հեղինակները՝ Արթուր և Կարեն Սաղաթեյանները:

Կրթօջախի տնօրեն Կարինե Հովսեփյանն իր խոսքում համոզմունք հայտնեց, որ գրված շրջանավարտների հիշատակը հավերժ կմնա դպրոցի պատերի ներսում և կդաստիարակի սերունդներին և բոլորի անուսից շնորհակալություն հայտնեց Շավարշի ծնողներին՝ հուշադրյուրի կառուցման աշխատանքները կազմակերպելու համար, իսկ հուշադրյուրի բացման պատիվը վերապահվեց Շավարշ Մուրադյանի եղբորը՝ Ալեքսին:

Օրվա խորհրդին պատշաճոր էլույթներ ունեցան դասվարներ Էռնա Մկրտչյանը, դասղեկ Լեյլի Մկրտչյանը, տնօրենի մասնագիտական կրթական աջակցության գծով տեղակալ Նարինե Բաբայանը: «Ղեկավար է գտնել սիրտխառն խոսքեր», – ասում էին օրվա բանաստեղծները, բայց եւ յուրովի ներկայացնում իրենց սաներին: «Շատ եմ ցավում, որ Շավարշի կյանքը կիսատ մնաց, ցավում եմ, որ երազանքները չիրականացան, որ այլևս նրան չեմ հանդիպելու իմ հարազատ քաղաքի փողոցներում, չեմ լսելու նրա հարազատ ծայրը, – ասում է դասվար Էռնա Հակոբյանը, – ցավում եմ, որ Շավարշի ծնողներն այդպիսի դառնություն կրեցին և իրենց ուներին կրում են վշտի ծանր բեռը»: Նարինե Բաբայանն Արեգ Հակոբյանի մասին ասում է. «Դեռ մանկուց սիրում էր իր երկիրը, հայրենասիրական երգերը, զինվորական համազգեստը: Հայրենասեր էր, կյանքով լի, ժպտաղետ ու բարի, կամեցող ու կարեկցող, հպարտ ու հզոր: Երազանքներ ուներ ու բազում նպատակներ: Ինչքան խորն էր Արեգի հոգին, այնքան մաքուր էր նրա սիրտը: Ճանաչողները փաստում են՝ նրա հետ կարող էիր ժամերով ու առանց երկմտելու խոսել, կիսվել, զրուցել ու մի կուշտ ծիծաղել (կատակասեր էր)»:

Դասղեկ Լեյլի Մկրտչյանը Գրիշա Թումանյանին բնութագրեց որպես բարի, ընկերասեր, զուսպ ու հավասարակշռված անձնավորության, ով ուներ պատասխանատվության զգացում եւ պատրաստ էր օգնել բոլորին: Ավաղ, նրա կյանքը եւս ողբերգականորեն ընդհատվեց... Հուլիսի 9-րդ դասարանի աշակերտուհի, զոհված Արեգ Հակոբյանի դուստր Ինեսա Հակոբյանի խոսքը. «Չավակները լույս աշխարհ են գալիս իրենց ծնողների արարքների դրոշմը ճակատին՝ անկախ նրանից՝ լա՛վ եմ, թե՛՛ վատ: Շնորհակալ եմ իմ հայրկիցն իմ գլուխը բարձր պահելու հնարավորություն ընձեռնելու համար: Դու նախընտրեցիր հայրենիքի անկախության համար պայքարելու ու անմահանալու, նախընտրեցիր ապրել առանց մեզ, բայց հայրենիքի համար: Գիտակցում եմ, որ չեմ տեսնելու քեզ, բայց դա չի նշանակում, որ դու չկես, դու ապրում ես յուրաքանչյուրիս մեջ: Այրելու ես միշտ, դու հսկում ես ինձ, ես դա զգում եմ, խոստանում եմ վերոքեն պահել քո եւ զինակիցներիդ հիշատակը, լինել քեզ արժանի գավակ: Հպարտ եմ քեզ նման հայր ունենալու համար»:

«Արծիվ-30 մահապարտներ» գումարտակի փոխհրամանատար Եվրեմ Մարգարյանը, ում հրամանատարության ներքո հասցրեց կռվել Շավարշ Մուրադյանը, նրան բնութագրեց որպես հավասարակշռված մարտիկ, ներկայացրեց սեպտեմբերի 29-ի մարտը, որ վերջինը եղավ հայրենիքի զինվորի համար: Նաեւ հրապարակվեց Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանի հրամանագիրը Շավարշ Մուրադյանին հետմահու «Մարտական ծառայություն» մեդալով պարգևատրելու մասին:

Կրթօջախի բակում տեղի ունեցած ոգեկոչման արարողությունից հետո միջոցառումը շարունակվեց դպրոցի դահլիճում, որտեղ աշակերտները հանդես եկան գրական-երաժշտական համադրությամբ: Հնչեցին ազգային-հայրենասիրական երգեր ու բանաստեղծություններ, հայտարարվեց, որ այսուհետ կրթօջախի երեք դասաստեղծ կրեցին եւ երեք հերոսների անունները, ինչի առիթով դպրոցականներն ընթերցեցին երդման տեքստը եւ պարտավորվեցին շարունակել զոհվածների կիսատ թողած գործը...

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Հրաշագործ բժշկապետին՝ Համլետ Գրիգորիչին

Մեծարժող պարոն Հայրապետյան

Ես արդեն իմ հայրենի բնակավայրում եմ Գրիգորի տարածաշրջանի Հարժիս գյուղում: Իմ տանն եմ եւ փորձում եմ հնարավորինս վերականգնել երբեմնի առօրյա... Եվ այդ ամենը՝ Ձեր շնորհով: Բայց Դուք, ինչպես հիմա եմ հասկանում, ոչ միայն փրկեցիք կյանքս, այլևս իմ մեջ ապրելու, արարելու հույս արթնացրիք:

Տաք տարրը ավելի է՝ առողջական լրջագույն խնդիրներ ունեմ, ժամանակ առ ժամանակ եւ Գրիգորի, եւ մայրաքաղաքի հիվանդանոցներում ստացիոնար բուժման եմ գնացել: Բազմաթիվ բժիշկներ եմ ունեցել, որոնց երախտագիտությամբ եմ հիշում:

Բայց Դուք... Դուք ցույց տվեցիք, որ իսկապես իրաշագործ եք, ապացուցեցիք (հավանաբար՝ հագարեորդ անգամ), որ ճշմարիտ բժիշկները սովորական մարդիկ ու մահկանացուներ չեն, այլ աստվածագարն են ու աստվածակարող:

Իսկ Ձեր գլխավորած՝ «Էրեբունի» բժշկական կենտրոնի Միտաբանական կլինիկայի կոլեկտիվը...

Ինչ որպեսզի մասնագետներ են, ինչ բարձր ու կարեկից մարդիկ. բուժող բժիշկ Մարիամ Լեւոնի Թադեոսյան, վերակենդանացման բաժնի ավագ քոլոլ տիկին Կարինե... Իմ անկեղծ խոնարհումը բոլորիդ եւ յուրաքանչյուրիդ:

Մեր տան բակից ամեն օր հայացքս հառնում է գյուղի հարավային եզերքին բարձրացող, երկնահաս Պետրոսախաչին, որ գյուղիս սրբասարն է:

Եվ հիմա՝ ամեն անգամ, երբ ականա ու մտովի գրուցում եմ մեր՝ աղոթարան դարձած այդ սրբասարի հետ, Ձեզ ու Ձեր գլխավորած կոլեկտիվին եմ հիշում եւ բոլորիդ համար առողջություն, բարօրություն եւ հաջողություններ հայցում երկնավորից:

Մի ուրիշ զգացում էլ ունեմ բոլոր սյունեցիներս պետք է հպարտություն ապրեմք, որ Սյունյաց աշխարհը հայ ժողովրդին այնպիսի գավակ է պարգևել, ինչպիսին բժշկապետ եւ իրաշագործ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Գրիգորի Հայրապետյանն է՝ Կապանա տիկից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Շնորհակալություն // Երախտագիտություն եմ հայտնում Կապանի պոլիկլինիկայի բժշկուհի Անահիտ Ջեմադրյանին, սոնոգրաֆիայի բժշկուհի Նառա Հայրապետյանին, բուժքույր Գայանե Հարությունյանին, դեղատան բուժքույր Հասմիկ Բաբաջանյանին՝ իմ հանդեպ դրսևորած մարդկային վերաբերմունքի համար:

ԱՆՆՅԻՏ ԱՍԻՐՅԱՆՅԱՆ

«Հոգու թռիչքին»՝ ստեղծագործական նոր թռիչք

Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում տեղի ունեցավ «Հոգու թռիչք» վոկալ-գործիքային անսամբլի ելույթը (գեղարվեստական ղեկավար՝ Շուշանիկ Գետրոյան): Գերազանց մեր ժամանակներում (կորոնավիրուսի համավարակ, պատերազմի պատճառած անամբ վերքեր) սա մի պատեհ առիթ էր թրթռափելու օրվա լարվածությունը, մանավանդ ընտրական քարոզարշավի, պատգամավորի թեկնածուների՝ միմյանց հանդեպ ունեցած «փոխհրաձգությունների» համատեքստում:

Իսկ անսամբլի ելույթը ներառում էր ինչպես հեղինակային (Շուշանիկ Գետրոյան), այնպես էլ ժամանակակից ու դասական ստեղծագործություններ (Առևտ Բաբաջանյան, Էնիո Մարիկոնե եւ այլն): Հավերժի ավարտին հանդիսականներն անկեղծ ծափողջույններով ու ծաղկեփնջերով վարձատրեցին Շուշանիկ Գետրոյանի ղեկավարած անսամբլի երաժիշտներին՝ մեներգչուհի Հասմիկ Մարտիրոսյան, ջութակահարներ Լիաննա Սողոմոնյան եւ Լիլյա Ղազարյան, կլարնետ Ալեն Սահակյան, բաս կիթառիստ Սամվել Ալեքսանյան, հարվածային գործիքներ՝ Էդուարդ Հարությունյան:



Մտում է «Հոգու թռիչք» համերաշխ կոլեկտիվին ստեղծագործական նոր թռիչքներ ցանկանալ:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Երիտասարդների միջազգային օրը Կապանում. հարցում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Կապանի համայնքապետարանի և մի շարք կազմակերպությունների սերտ համագործակցությամբ՝ Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք Կապանում այս տարվա ընթացքում շարունակաբար իրականացվելու են բազմաթիվ նախաձեռնություններ և միջոցառումներ: Երիտասարդական

միջոցառում է նախատեսված նաև Երիտասարդների միջազգային օրը՝ օգոստոսի 12-ին: ԿԳՄՍ նախարարության երիտասարդական բաղաբանության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչությունը, կարևորելով երիտասարդների ներգրավվածությունը և կարծիքը, անցկացնում է հարցում պարզելու նրանց՝ Երիտասարդների միջազգային օրվան նվիրված միջոցառում

ների նախընտրությունները, առաջարկները: Առցանց հարցմանը մասնակցելիս կարող եք ընտրել նշված տարբերակներից որևէ մեկը և/կամ առաջարկել Ձերը: Հարցումը հետևյալ հղմամբ՝ <https://bit.ly/3vbWdCc> Հիշեցնենք, որ Կապանը ճանաչվել է Հայաստանի երիտասարդական մայրաքաղաք դեռևս 2019 թվականի դեկտեմբերին, սակայն կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ միջոցառումների ծրագիրը հետաձգվել է: Այս տարվա մայիսի 1-ին տեղի է ունեցել Կապանի՝ որպես Հայաստանի երիտասարդական մայրաքաղաքի բացման հանդիսավոր արարողությունը, և տրվել է միջոցառումների մեկնարկը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը վստահեցրել է, որ երիտասարդական մայրաքաղաքում միջոցառումների պակաս չի զգացվելու. «Միջոցառումները լինելու են շարունակական, և ամբողջ տարի միասին աշխատելու ենք: Շատ կարևոր է, որ երիտասարդները, նախորդ տարիների համեմատ, զգան իրենց կյանքի ակտիվության տարբերությունները: Մեր խնդիրն է անել առավելագույնը, աջակցել և նպաստել նրանց ինքնաիրացմանն ու հեռանկարների զարգացմանը»:

Կապանի արվեստի մանկական դպրոցի սաները հանդես եկան համերգ-հաշվետվությամբ

Հունիսը մարզկենտրոնի արվեստի եւ երաժշտական դպրոցների համար հաշվետու համերգների ժամանակաշրջանն էր: Լախորդ տարի, կորոնավիրուսի համավարակով պայմանավորված, բազմաթույթ միջոցառումներ անցկացվեցին համանցանցային հարթակում: Այս ուստարում, երբ համավարակը զգալիորեն նահանջել է, նորից հնարավորություն է ընձեռվել հանդես գալ բեմահարթակից:



բաժնի 5-րդ դասարանի սաները հանդես եկան Դանիել Վարուժանի բանաստեղծությունների հիման վրա ստեղծված կոմպոզիցիայով:

Համերգ-հաշվետվությունը եզրփակվեց պարարվեստի բաժնի 6-7-րդ դասարանների (պարուսույց՝ Թամար Ստեփանյան) Արցախյան մերօրյա պատերազմում զոհված հերոսներին նվիրված բեմադրությամբ:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Տոկիոյի օլիմպիական խաղերում Կապանը կունենա իր պատվիրակը

Մայիսը հազեցած էր սպորտային մրցումներով, որոնց ժամանակ մարզիկները ձգտում են բարձր արդյունքներ ցույց տալուց զատ՝ Տոկիոյի օլիմպիական խաղերի ուղեգիր ձեռք բերել: Մարզասերներն այս առումով ակնկալիքներ ունեին կապանցի եռացատկորդ Լեւոն Աղայանից, ով լիովին արդարացրեց սպասելիքները:



պիական մեկնարկներին եւ Լեւոնին հաջողություն մատչվեց: Մինչև օլիմպիական մեկնելը Լեւոնը Հայաստանի հավաքականի կազմում Կիպրոսում կմասնակցի Եվրոպայի թիմային առաջնությանը:

Կապանի համայնքապետարանի սպորտային ոլորտի ղեկավար Արշակ Սարգսյանի փոխանցմամբ՝ Լեւոնը Հայաստանի մարզիկներից 9-րդն է, ով Տոկիոյի օլիմպիական խաղերի ուղեգիր ձեռք բերեց:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Երգով ու սիրով Սյունիքում եւ Արցախում

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը եւ «Հայաստանի փոքրիկ երգիչներ» մանկական երգչախումբը մայիսի 28-ից հունիսի 5-ը Սյունիքում եւ Արցախում անցկացնում էր «Երգով ու սիրով» խորագրով երգչախմբային փառատոն՝ «Թիկունքը՝ մշակույթ, սահմանը՝ կենտրոն» ծրագրի շրջանակում: Հունիսի 3-ին Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճը տրամադրված էր պատանի երգիչներին՝ մայրաքաղաքից ժամանած, ինչպես նաեւ մարզի երաժշտական ու արվեստի դպրոցների սաներին: «Սյունիքը մեզ համար հարթագետ տան նման մի բան է, հաճույքով ենք հանդես գալիս այստեղ: Մենք եկել ենք Սյունիք մեծ մղուժով, մեծ ձգտումով, անկեղծ հոգով ու սրտով», - համերգի սկզբում ասաց «Հայաստանի պատանի երգիչներ» երգչախմբի գեղարվեստական ղեկավար, Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Տիգրան Հեքեթյանը:

սական, ժամանակակից, ժողովրդական ու հանրամատչելի ստեղծագործություններ: Բազմաթիվ միջազգային մրցույթների դափնեկիր, միջազգային ամենատարբեր փառատոների մասնակից երգչախումբն այս անգամ կատարեց հայ եւ արտասահմանցի կոմպոզիտորների ստեղծագործություններ՝ հանդիսատեսին հիացնելով կատարողական բարձր արվեստով:

Ամենավերջում միացյալ երգչախումբը կատարեց Ռոբերտ Պետրոսյանի «Մուշ», «Երկիր հայրենի», Անու Բաբաջանյանի «Տղերքը, որոնք չկան», Էդգար Յովհաննիսյանի «Երեւոնի-Երեւան» (խոսք՝ Պարույր Սեւակի) ստեղծագործությունները:

Համերգի ավարտին մատերո Տիգրան Հեքեթյանը շնորհակալություն հայտնեց մի շարք անձանց՝ փառատոնի գաղափարով ներշնչվելու եւ նախաձեռնությանը նեցուկ լինելու համար, մասնավորապես, Կապանի արվեստի բուլեջի նախկին տնօրեն Լիաննա Զակոբյանին:

«Երգով ու սիրով» երգչախմբային փառատոնը հետպատերազմյան իրադարձություններով պայմանավորված լարված իրավիճակ մեղմելու միտված մի քայլ էր, որ լիովին արդարացրեց փառատոնի կազմակերպիչների սպասելիքները: Համեմայն դեպք, մշակույթի կենտրոնի դահլիճում հավաքված հանդիսատեսը հաճելի զգացողություններով թողեց դահլիճը՝ փոքրիկ երգիչներին կրկին հանդիպելու ակնկալիքով:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ՄԵԿԼԱՐԿՈՒՄ Ե ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԱՆ ԶԵՐԹԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԸ



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության երաշխավորությամբ (ՀՀ ԿԳՄՍ նախարարի 03.06.2021 թ., թիվ 887-Ա/2 հրաման) «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը կազմակերպում է վերապատրաստման դասընթաց հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու ցանկացողների համար: Դասընթացը կազմակերպվում է Գորիսի պետական համալսարանում (թ. Գորիս, Ավանգարդ 2, հեռ.՝ 077-33-76-90): Վերապատրաստման դասընթացին կարող է մասնակցել այն անձը, ով ունի բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս), վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանք կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Վերապատրաստմանը մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

- դիմում՝ Գորիսի պետական համալսարանի ռեկտորի անունով (Ձև-1, լրացվում է տեղում),
 - 3x4 չափի երկու լուսանկար,
 - բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
 - աշխատանքային գրքույկի պատճենը կամ բաղվածքը կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական, գիտամանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանքը,
 - անձնագրի կամ նույնականացման բարտի պատճենը,
 - մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը),
 - Գորիսի պետական համալսարանի 90028800012 հաշվետված համարին փոխանցված գումարի անդորրագիրը (կարող է իրականացվել նաև սոցիալական փաթեթի շրջանակներում հատկացվող գումարի փոխանցում):
- Փաստաթղթերի պատճենները ներկայացվում են բնօրինակների հետ միասին: Պատճենների իսկությունը ստուգելուց և սեանավորելուց հետո բնօրինակները վերադարձվում են: Վերապատրաստման դասընթացի արժեքը 80 000 (ութսուն հազար) դրամ է, ներառյալ մասնակցներին տրամադրվող բաշխիչ կյուբերը (առցանց թեստերը ու դասընթացի կյուբերը կունենան 24/7 հասանելիություն և կապված կլինեն մասնակցների էլեկտրոնային հասցեներին) և սուրճի ընդմիջումները: Դասընթացն իրականացվում է առկա, հեռավար, հիբրիդային ձևաչափերով՝ 110 ժամ ծանրաբեռնվածությամբ, որը ներառում է վերապատրաստման բովանդակության պարտադիր՝ իրավական, կառավարական, մանկավարժական, հոգեբանական գիտելիքների, ինչպես նաև՝ ուսուցման մեթոդաբանության և գործնական կարողությունների ձևավորմանն ու ամրապնդմանն ուղղված բաղադրիչները, և (կամ) ընտրական մոդուլների խումբ (առաջարկվում է կամ ընտրական երկու մոդուլ՝ յուրաքանչյուրը 15 ժամ ծանրաբեռնվածությամբ, որոնցից առանց լրացուցիչ վճարման դասընթացի մասնակիցը կարող է ընտրել մեկը):

- Պարտադիր կրթամասը ներառում է հինգ մոդուլ՝ 95 ժամ ուսումնական բեռնվածությամբ.
- Հանրակրթության բնագավառի օրենսդրություն,
- Իրավունքի հիմունքներ,
- Գնումների գործընթացի կազմակերպում,
- Կիրառական հաշվապահություն,
- Կիրառական մանկավարժություն և հոգեբանություն:
- Կամ ընտրական կրթամասից առաջարկվող մոդուլներն են.
- Տեքստային և գործարար փաստաթղթերի մշակման տեխնոլոգիա,
- Օտար լեզու հատուկ նպատակներով:

Վերապատրաստման դասընթացը հաջողությամբ ավարտած մասնակցին տրվում է վկայական, որը նրան իրավունք է տալիս մասնակցելու հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու քննություններին: Դասընթացը վարում են Գորիսի պետական համալսարանի փորձառու աշխատակիցներ, հրավիրված այլ մասնագետներ: Դիմումներն ընդունվում են 2021 թվականի հունիսի 7-ից մինչև 22-ը ներառյալ՝ Գորիսի պետական համալսարանում (Աշխատակազմի կառավարման բաժին), հեռ.՝ 098-19-67-07, 077-33-76-90, ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից)՝ ժամը 9.00-ից 16.00-ն: Վերապատրաստման դասընթացը սկսվում է հունիսի 24-ից՝ 20 օր տևողությամբ: Ունկնդիրների ցանկությամբ դասընթացի կազմակերպման ձևը և ժամանակացույցը կարող է համաձայնեցվել: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ.՝ (077) 33 76 90 (համակարգող՝ Ա.Դինուկ), կայք՝ www.gorsu.am, E-mail՝ gorissu@mail.ru, fb՝ https://www.facebook.com/TrainingCoursesGSU, հասցե՝ ՀՀ, Գորիս, Ավանգարդ 2 (Գորիսի պետական համալսարան, 1-ին մասնաշենք, 2-րդ հարկ, Աշխատակազմի կառավարման բաժին): Սիրով և պատասխանատվությամբ սպասում ենք:

ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏԱՆ ԶԵՐԹԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՅՏ

Հ.Գ. «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը Սյունիքի մարզից միակ երաշխավորված կազմակերպությունն է նման դասընթացներ կազմակերպելու համար:

Սյունյաց Երկիր

ՀՊԱՆՏՐՈՒ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԴԱՍԱԽԱՏԱՆՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:

ՏՊԱԳՐԿՈՒՄ Ե 2003Թ. ՀՈՎՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:

(+374 91) 45 90 47

(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru

www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կյուբերը ներկայացնելու մեթոդագիր վիճակում:

«ԳՐՎԱԾԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող կյուբերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկիր» պարտադիր է:

© Նշանի տակ տպագրվում են գովազդային կյուբեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

Շավաղը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրականը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 15.06.2021թ.: